ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 16 » սեպտեմբերի 2022 թվականի N: 487-Ա ք.Գյումրի

ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԵՎ ԵՐԱՆՈՒՀԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 17-րդ և 10-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ հաստատված «Գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման վճարման կարգի» 3-րդ, 7-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի օգոստոսի 26-ի N ԳՍ/17.3/22870-2022 գրությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ Կարեն Մանուկյանին և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի օգնական Երանուհի Ավետիսյանին 2022 թվականի սեպտեմբերի 19-ին գործուղել քաղաք Երևան՝ «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությունում կայանալիք հայ-ռուսական միջտարածաշրջանային իններորդ համաժողովին մասնակցելու նպատակով:

2. Գործուղման տևողությունը մեկ օր՝ 2022 թվականի սեպտեմբերի 19-ին:

Ն.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է